ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ՇՏԱՊԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«05» 06 2024թ. № 38

«ԱԳԱՍՏ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ն 2024թ. մայիսի 30-ին միակողմանի մասնակի լուծել է «Ագաստ» ՍՊԸ-ի հետ 2024թ. հունվարի 8-ին կնքված №ՇԲՕ-ԳՀ-ԱՊՁԲ-24/2-3 և 26/01/2024թ. կնքված №ՇԲՕ-ԳՀԱՊՁԲ-24/2-8 Պայմանագրերը՝ չմատակարարված ապրանքների մասով

ԵՎ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով, ինչպես նաև նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ՝

1. «Ագաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար հիմքերը գնահատել բավարար:
2. «Ագաստ» ՍՊԸ-ի տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:
3. Ստորև ներկայացվում է «Ագաստ» ՍՊԸ-ի տվյալները՝ համաձայն սահմանված ձևաչափի.

Մասնակցի						
			գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
անվանումը	ՀՎՀՀ/ ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«Ագաստ» ՍՊԸ	00435781	ք.Երևան, Տ.Պետրոսյան 31/1		V		05/06//2024թ. ՇԲՕ-ԳՀ-ԱՊՁԲ-24/2

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՏՆՕՐԵՆ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«ՇՏԱՊԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ *02507818*